

«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ

**ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան համայնքի Ս. Ավետիսյանի
անվան միջնակարգ դպրոցի հիմնական մասնաշենքի ամրացման և
մեկ մասնաշենքի կառուցում**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ**

(լրամշակված)

**«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ,
ՏՆՕՐԵՆ**

Լ. Պողոսյան

Վանաձոր

2020

Բովանդակություն

Հապավումներ	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	7
2.1 Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ	7
2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը	7
2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը	8
2.4 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը	8
3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԴԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ	9
4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՈՐՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	12
4.1 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումները	19
4.1.1 Գոյություն ունեցող մասնաշենքի նախագծում	19
4.1.2 Նոր մասնաշենքի նախագծում	20
4.1.3 Ջրամատակարարում և ջրահեռացում	21
4.2 Գազմատակարարում և էլեկտրամատակարարման	23
4.2.1 Ձեռուցում և օդափոխություն	24
4.3 Շինարարական աշխատանքների կազմակերպում	25
4.3.1 Նախաշինարարական աշխատանքների իրականացման փուլ	26
4.3.2 Ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում	27
4.3.3 Կառուցապատման աշխատանքների կազմակերպում	29
4.3.4 Անվտանգության տեխնիկայի հարցեր և հակահրդեհային միջոցառումներ	32
5 ԵԼՔԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	34
5.1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը	34

5.2	Սեյսմիկ բնութագրերը.....	35
5.3	Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը	36
5.4	Օդային ավազան	36
5.5	Հողօգտագործումը.....	38
5.6	Ջրային ռեսուրսներ.....	38
5.7	Բուսական աշխարհ.....	38
6	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ.....	39
6.1	Շինարարության փուլ.....	39
6.1.1	Օդային ավազանի աղտոտվածություն	39
6.1.2	Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն	42
6.1.3	<i>Թափոնների առաջացում և կառավարում.....</i>	44
6.1.4	<i>Հողային համակարգերի վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումներ.....</i>	46
6.1.5	Ազդեցություն բուսական աշխարհի վրա	46
6.1.6	Աշխատանքի անվտանգություն և առողջություն.....	47
6.2	Շահագործման փուլ.....	49
6.2.1	Օդային ավազանի աղտոտվածություն	49
7	ԲՆԱԴԱՅՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	51
7.1	Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները	51
7.2	Մոնիտորինգ	53
134.	ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ	55
9.	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	56
10.	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	57
	Հավելված 1. Բնապահպանական կառավարման պլան՝ մեղմացնող միջոցառումներ	57
	Հավելված 2 Բնապահպանական կառավարման պլան՝ մոնիտորինգ.....	86
	Հավելված 3 Բողոքի գրանցման ձև.....	93
	Հավելված 4 Արտակարգ պատահարի մասին հաշվետվության ձև.....	93
	Հավելված 5. Գոյություն ունեցող մասնաշենքի նկուղային հարկի հատակագիծ	94
	Հավելված 6 Գոյություն ունեցող մասնաշենքի առաջին հարկի հատակագիծ.....	95
	Հավելված 7. Գոյություն ունեցող մասնաշենքի երկրորդ հարկի հատակագիծ.....	96
	Հավելված 8. Նոր մասնաշենքի առաջին հարկի և մարզադահլիճի հատակագիծ	97
	Հավելված 9. Նոր մասնաշենքի երկրորդ հարկի հատակագիծ	98
	Հավելված 10. Նոր մասնաշենքի երրորդ հարկի հատակագիծ.....	99

Հավելված 11. Կաթսայատան հատակագիծ.....	100
Հավելված 12. ճարտարապետահատակագծային առաջադրանք	101
Հավելված 13. Անշարժ գույքի սեփականության վկայական	102
Հավելված 14. Հանրային քննարկման մասնակիցների ցանկ.....	103
Հավելված 15 Շինհրապարակի կազմակերպման պլան.....	104
Հավելված 16. Շինարարական աշխատանքների ժամանակացույցը	105
Հավելված 17. Աղբահանության տեղեկանք	106
Հավելված 18. Ոռոգման ցանց և կենսաբանական մաքրման կայանի հատակագծում	107
Հավելված 19. Արևային վահանակների հատակագծումը տանիքում	108

Հապավումներ

ԱԶԲ	Ասիական Զարգացման Բանկ
ԲԱՄ	Բողոքների արձանագրման մեխանիզմ
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ՍԱԲ	Սեյսմիկ անվտանգության բարելավում
ՆԳՀ	Նախնական գնահատման հայտ
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության Շինարարության Նորմեր
ՀՏԶՀ	Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամը
ՀՄԿ	Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն
ՇՆԿ	Շինարարական նորմեր ու կանոններ
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցի վերակառուցում և նոր մասնաշենքի կառուցում
Ծրագրի նպատակը	ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավում
Ծրագրի պատվիրատու	Հայաստանի Տարածքային Ձարգացման Հիմնադրամ (ՀՏԶՀ)
Ձեռնարկող	«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	Վանաձորի համայնք, Վարդանանաց 23/129
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ էլ փոստ և հեռախոս`	Էլ. փոստ՝ poghosoval@mail.ru Հեռ.՝ 093-32-45-63
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Արագածոտնի մարզ, Օհանավան համայնք, 6 փողոց, 2-րդ փակողի, թիվ 4 դպրոցական շենք
Կառուցապատվող հողատարածքի մակերեսը	0.564 հա
Կառույցների կառուցապատման մակերեսը	1896 քմ (ներառյալ կաթսայատուն և էլ. ենթակայան)
Դպրոց նախագծային հզորությունը	700 աշակերտ

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան համայնքում Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման ենթածրագրին իրականացվելու է դպրոցների Սեյսմիկ անվտանգության բարելավման (Այսուհետ՝ ՍԱԲ) ծրագրի շրջանակում Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) և ՀՀ կառավարության աջակցությամբ՝ արդյունքների վրա հիմնված վարկավորման (ԱՀՎ) մոդելի կիրառմամբ:
2. Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովման, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:
3. Դպրոցների ՍԱԲ ծրագրի յուրաքանչյուր ենթածրագրի համար իրականացվում է բնապահպանական ազդեցության գնահատում՝ ԱԶԲ Անվտանգության քաղաքականության դրույթների (2009թ.) և ՀՀ օրենսդրության համաձայն: Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (21 հունիս, 2014թ.) Հոդված 14, կետ 6-ի, 1500 ք.մ բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության կառույցները դասվում են «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում և բնապահպանական պետական փորձաքննության իրականացում:
4. ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան համայնքի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման գործունեության շրջանակում մասնաշենքերի (ներառյալ՝ կաթսայատունը և էլ. ենթակայանը) կառուցապատման մակերեսը կազմում է 1 896 ք.մ և համաձայն սույն օրենքի պահանջում է ՆԳՀ-ի մշակում և ներկայացում բնապահպանական պետական փորձաքննության և բնապահպանական պետական փորձագիտական եզրակացության ստացում:

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ

5. Դպրոցների Սեյսմիկ անվտանգության բարելավման (ՍԱԲ) ծրագրի համար մշակվել է Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ (ԲԳՈւՇ) փաստաթուղթը: Փաստաթղթի նպատակն է համատեղել ՀՀ օրենսդրական նորմերի և ԱԶԲ բնապահպանական անվտանգության մեխանիզմների պահանջները: Փաստաթուղթը մշակվել է որպես ՍԱԲ ծրագրի բնապահպանական գնահատման ուղեցույց Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) համար, որը հանդիսանում է Ծրագիրն իրականացնող մարմինը: Փաստաթուղթը ներառում է նաև Ծրագրի բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները, դպրոցների ընտրության չափանիշները, կազմակերպումը և ԲԿՊ իրականացման ընթացակարգերը՝ Ծրագրի իրականացման նախագծման, նախաշինարարական, շինարարության և հետշինարարական փուլերում:

2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը

6. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ բնապահպանական մեղմացման միջոցառումները:

2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը

7. ՇՄԱԳ հաշվետվության մեջ գնահատման ենթակա օբյեկտները և բնութագրերը սահմանված են "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13 կետերում:

2.4 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը

8. Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ՆԳՀ-ի մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև ԱԶԲ-ի-բնապահպանական ուղեցույցների և ձեռնարկների դրույթներին համապատասխան: Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախագծվող դպրոցի աշխատանքային նախագիծը,
- նախատեսվող գործունեության տեղանք կատարած այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը,
- գտնվելու տեղանքի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները,
- ծրագրի իրականացման համար մշակված Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ (ԲԳՈԻՇ) փաստաթուղթը,
- ՀՀ օրենսդրության բնապահպանական և օրնսդրական կարգավորիչ շրջանակը
- ազդակակիր և շահագրգիռ կողմերի հետ քննարկումները:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ

9. Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

10. **ՀՀ Սահմանադրություն (2015).** Հոդվածներ 10 սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանման վերարտադրության, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև հոդված 8-ի համաձայն Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին:

11. **ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014)** (Հոդված 14, կետ 6, հոդված 16) պահանջում է իրականացնել ծրագրերի բնապահպանական գնահատում, գնությունն ու ըստ կատեգորիաների դասակարգում կախված գործունեության ձևից, ինչպես նաև ենթարկել պետական փորձաքննության և ստանալ փորձագիտական եզրակացություն:

12. **ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004)** կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:

13. **ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005)** կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:

14. **ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000)** կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:

15. **ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)**(Հոդվածներ 13,14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):
16. **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11- Ն** «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):
17. **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44** Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:
18. **ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն** Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003) պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:
19. **ՀՀ Կառավարության արձանագրային որոշում N 30** «Շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմաններին հավանություն տալու մասին» (23 հուլիսի 2009), որը սահմանում է շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմանները, երկրորդային ռեսուրս հանդիսացող թափոնների օգտագործման անվանացանկերը, շինարարության և քանդման թափոնների տեսակների ցանկերը:

Ուղեցույցներ և ստանդարտներ

20. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

21. **Բնապահպանական որակի ստանդարտներ**, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:


4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

22. Օհանավան համայնքի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցի գործող մասնաշենքի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման գործունեությունը նախատեսվում է իրականացնել ՀՀ Արագածոտնի մարզի, Օհանավան համայնքի 6 փողոց, 2-րդ փակողի հասցեում գործող միջնակարգ դպրոցի տարածքում:

23. Նախագծվող դպրոցի հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 5 640 ք.մ (Հավելված 13.): Գործող դպրոցի տեղադիրքը Օհանավան համայնքում ներկայացված է Նկ.1-ում:


Նկ.1 Նախագծվող դպրոցի գտնվելու վայրը և իրավիճակային պատկերը Օհանավան համայնքում:

Աղբյուրը: google earth data 2020.



24. Դպրոցի մերձակա տարածքում առկա են տնամերձ այգիներ և բնակելի տներ, որոնք գտնվում են դպրոցից մոտ 20-100մ հեռավորության վրա, իսկ դպրոցի տարածքում առկա են էլեկտրական ենթակայան և կաթսայատունը, բացակայում են այլ տիպի շինությունները: Տարածքի նկարագրությունը՝ իրավիճակային քարտեզի տեսքով, ներկայացված է Նկ.2-ում ստորև.

Նկ.2 Նախագծվող դպրոցի տեղանքի իրավիճակային հատակագիծը:



25. Բնութագրվող տարածքում առկա է պտղատու ծառերի այգի, որը գտնվում է նախագծվող մասնաշենքի գոտում և նախատեսվում է հեռացնել, ինչը համաձայնեցված է տվյալ ծառերի սեփականատիրոջ հետ: Տարածքում այլ բուսականություն չկա:

26. Օհանավանում բնակչության թվաքանակը, համաձայն համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի, 2020 թվականի դրությամբ կազմում է 2 527 մարդ:

27. Ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող երկհարկանի (ունի նաև նկուղային հարկ) մասնաշենքի վերակառուցում և նոր նախագծվող երեք հարկանի առանձին մարզադահլիճով

մասնաշենքի կառուցում, իսկ գոյություն ունեցող հիմնական մասնաշենքը նախատեսվում է ամբողջությամբ ապամոնտաժել: Դպրոցի գլխավոր հատակագիծը ներկայացված է Նկ.2-ում:

28. Ինչպես վերը նշվեց, նախագծվող դպրոցի հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 0.564 հա: Ներկայացվող գործունեության ընթացքում դպրոցի մասնաշենքերի կառուցապատման, տարածքի բարեկարգման և կանաչապատ գոտիների բարեկարգման աշխատանքների շրջանակը կընդգրկի 5 518.21 ք.մ տարածքը, մասնավորապես՝ դպրոցի մասնաշենքերի (ներառյալ՝ կաթսայատունը և էլ.էնթակայանը) կառուցապատման մակերեսը կազմում է 1 896 ք.մ և կբարեկարգվի 3 622.21 ք.մ տարածք, ներառյալ՝ բացօթյա մարզահրպարակը (428.64 ք.մ), նորաստեղծ ասֆալտապատ գոտին (2 521 ք.մ) և նորաստեղծ կանաչ գոտին (672.57 ք.մ):

29. Բնութագրվող տարածքի մնացած 121.79 ք.մ հատվածը ըստ հատակագծման զբաղեցված է բնահողով, հարում և ձգվում է նախագծվող ոռոգման ջրագծի երկայնքով (շուրջ 106.9 ք.մ), իսկ 15 ք.մ-ը նախատեսվում է կենսաբանական կայանի տեղադրման համար: Նախագծված դպրոցի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1.-ում:

30. Գոյություն ունեցող դպրոցը բաղկացած է երկու մասնաշենքից, որոնք առանձին կառույցներն են: Երկու մասնաշենքերը կառուցվել են տարբեր ժամանակաշրջաններում: Առաջին մասնաշենքը շահագործման է հանձնվել 1959 թվականին, ուղղանկյունաձև ուրվագծով շինություն է (№1 (թվերը համապատասխանում են հատակագծում մասնաշենքերի համարակալմանը), 850 ք.մ,) ունի վերգետնյա երկու և նկուղային հարկ: Մասնաշենքը շահագործվում է ամբողջությամբ, այստեղ են տեղակայված հիմնական (5-12) դասարանները, տնօրենի սենյակը և վարչական նշանակության այլ հիմնական սենյակները: Նախագծով նախատեսված է մասնաշենքի վերակառուցում և վերահատակագծում:): Նախագծվող մասնաշենքը 400 աշակերտի համար է:

31. Գյություն ունեցող դպրոցի երկրորդ մասնաշենքը (Մասնաշենք №9), որը ծառայում է որպես նախակրթարան ի սկզբանե նախատեսված է եղել որպես ուսուցչի տուն: Այստեղ են տեղակայված դպրոցի 1-4 դասարանները, այն նախատեսվում է քանդել և փոխարենը

նախագծվում է երեք հարկանի նոր մասնաշենք (№2, №3 1004 ք.մ), որում՝ արևմտյան հատվածում, նախատեսվում է դպրոցի փակ մարզադահլիճ (№3, 292.5 ք.մ):

32. Տարածքի արևելյան հատվածում՝ ըստ գլխավոր հատակագծի, նախատեսվում է դպրոցի բացօթյա մարզադաշտ (№4, 428.64 ք.մ): Նախագծվող մասնաշենքը 300 աշակերտի համար է:

33. Դպրոցի մոտեցման համար գոյություն ունի միայն մեկ ճանապարհ՝ նախագծվող տարածքի հարավ-արևմտյան մասից: Հողակտորը ամբողջովին շրջապատված է տնամերձ տարածքներով, ինչը դժվարացնում է դպրոցի համար մոտեցման նոր ուղիների նախագծումը/ստեղծումը: Դպրոցի տարածքի հարավային հատվածից հետիոտնային մոտեցման համար մուտքը աստիճաններով բացառվում է՝ բացառելու համար բնակիչների մուտքը դեպի դպրոց և տարանցիկ ուղին:

34. Գոյություն ունեցող դպրոցի տարածքում քանդման/ապամոնտաժման աշխատանքների շրջանակը կներառի.

- գոյություն ունեցող դպրոցի մասնաշենքը (№ 9)
- գոյություն ունեցող բացօթյա սանհանգույցը (1 հատ)
- կեղտահորերը (5 հատ)
- ցայտաղբյուրը -1 հատ
- գոյություն ունեցող և երկրաբանական հետազոտությամբ բացված հորատանցքները նախատեսվում է վերակազմել կավային շաղախով և բետոնացմամբ
- գոյություն ունեցող կաթսայատան ընդլայնում (№ 5, 30 ք.մ)
- գոյություն ունեցող էլեկտրական ենթակայանի տեղափոխում դպրոցի տարածքի հյուսիսային հատված (№7, 12 ք.մ)

35. Տարածքի *բարեկարգման և կանաչապատման* աշխատանքների շրջանակում նախատեսվում է.

- դպրոցի տարածքի հարավային մասի բարեկարգում (ուղղաձիգ հատակագծում)
- տարածքի ողջ պարագծով $h=1.5-2.2$ մ բարձրությամբ ցանկապատի իրականացում և նոր դարպասի տեղադրում
- ռոտոման ջրագծի նոր խողովակաշարի իրականացում

- տարածքի հարավային մասի ռելիեֆի հողային հարթեցում և լիցք
- հենապատերի իրականացում
- տարածքի ազատ գոտիների ասֆալտապատում (2521 ք.մ)


36. Դպրոցի *կանաչապատման աշխատանքների շրջանակում* նախատեսվում է նոր գազոնապատ 672.57 ք.մ մակերեսով կանաչ գոտու ստեղծում, որտեղ կտնկվեն սյունաձև թույաներ (5 հատ), սողացող գլխի (9 հատ) և սամշիտ (1 հատ): Նշված աշխատանքները կիրականացվեն տարածքի բուսահողով զբաղեցրած հատվածներում, կօգտագործվի նաև տարածքում մերկացվող և պահպանվող բուսահողը և լրացուցիչ բուսահողի մատակարարման կարիք ներկայացվող գործունեության ընթացքում չի դիտարկվում: Նախագծվում է նաև ռոռզման ցանց, որը կիրականացվի $d=75$ մմ պոլիէթիլենային խողովակների միջոցով և միացումը կիրականացվի տարածքի մերձակայքով անցնող համայնքային ռոռզման $d=500$ մմ ջրագծից:

Աղյուսակ 1

Նախագծվող դպրոցի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները

ՑՈՒՑԱՆԻՇԸ	ՄԻԱՎՈՐ	ԾԱՎԱԼ
Հողատարածքի ընդհանուր մակ.	հա	0.564
Մասնաշենքերի թիվը	հատ	2
Մասնաշենքերի կառուցապատման մակ.	ք.մ	1854
Դպրոցի նախագծվող տարողունակությունը	աշակերտ	700
Ուսումնական սենյակների թիվը	հատ	29
Ուսումնական սենյակների մակ.	ք.մ	1391
Սանհանգույցների թիվը	հատ	8
Բացօթյա մարզահրապարակ	հատ	1
Բացօթյա մարզահրապարակ	ք.մ	428.64
Ասֆալտապատման գոտու	ք.մ	2521
Կանաչապատման գոտու մակ.	ք.մ	672.57
<i>Հիմնական սենյակների մակերեսը</i>		
Հանդիսությունների դահլիճ	ք.մ	126.3
Մարզադահլիճ	ք.մ	289.5
Ուսուցչանոց	ք.մ	71.3
Բուժկետ	ք.մ	15.4
Գրադարան	ք.մ	41.3
Սանհանգույց	ք.մ	100.5
<i>Ինժեներական ցանցեր</i>		
Էլեկտրական ենթակայան մակ.	ք.մ	12
Կենս. մաքրման կայան	ք.մ	15
Էլ. սնուցում	կվտ-ժամ	175
Ջրամատակարարում	լ/վրկ	2.43
Կոյուղի	լ/վրկ	3.83
<i>Ջեռուցում</i>		
Կաթսայատան մակերես	ք.մ	30
Կաթսաների քանակ	հատ	2
Կաթսաների պահանջվող հզորություն	կվտ-ժամ	250
<i>Տաք ջրամատակարարում</i>		
<i>Ծավալային էլեկտրական ջրատաքացուցիչներ</i>		
Էլ. ջրատաքացուցիչ-19 կվտ	հատ	2
Տաք ջրամատակարարման կուտակիչ, V=1000լ	հատ	1
<i>Արևային էլեկտրաէներգիայի մատակարարում</i>		
Արևային վահանակ	կվտ	32

Նկ.3 *Նախագծվող դպրոցի գլխավոր հատակագիծը:*



4.1 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումները

4.1.1 Գոյություն ունեցող մասնաշենքի նախագծում

37. Դպրոցի գոյություն ունեցող մասնաշենքը, որը նախատեսվում է վերակառուցել ունի 850 ք.մ կառուցապատման մակերես, երկու վերեգետնյա հարկեր՝ $h=3.43$ մ հարկերի բարձրությամբ և նկուղային հարկ՝ $h=3.3$ մ բարձրությամբ: Մասնաշենքի հատակագծային լուծումները բերվում են Հավելված 5.-ից 6.-ում: Նկուղային հարկը (նախկինում որպես մարզադահլիճ) նախատեսված է որպես հանդիսությունների սրահ՝ 16.6×9 մ հատակագծային առանցքային չափերով: Մասնաշենքը նախատեսված է 400 աշակերտի համար և վերահատակագծման արդյունքում լաբորատոր սենյակները տեղափոխվել են նոր նախագծվող մասնաշենք, այս մասնաշենքը ծառայելու է բարձր դասարանների համար: Մասնաշենքում նախատեսվում են թեքահարթակներ և սակավաշարժ խմբերի համար նախատեսվող վերելակ:

38. Ներկայացվող նախագծով նախատեսված է այս մասնաշենքի դասարասենյակների դռների նորմավորում, բացվածքների ավելացում և փակում, հատակների նոր ծածկերի իրականացում, քանդվածքների վերականգնում: Մասնաշենքի արտաքին հարդարման աշխատանքներում նախատեսվում է հյուսիսային ճակատի և գլխավոր մուտքի հարդարման աշխատանքներ:

39. Ներքին հարդարումը բոլոր շենքերում նախատեսվում է գաջային սվաղով և լատեքսային ներկով, սանհանգույցներում՝ կերամիկական սալիկապատումով: Հատակները միջանցքներում, ռեկրեացիաներում և ճաշարանում նախատեսվում է պրեսգրանիտից, աշակերտական և ծառայողական սենյակներում և մարզադահլիճում՝ հատակի վինիլային ծածկից: Միջնորմները սենյակներում նախատեսվում է գիպսաստվարաթղթից, սանհանգույցներում՝ ջրակայուն, ձայնամեկուսիչ գիպսաստվարաթուղթ: Պատուհանները նախատեսված են սպիտակ գույնի ալյումինե և

մետաղապլաստե պրոֆիլներով, շենքի մուտքի դռները՝ ալյումինե ապակեփաթեթով, սենյակներինը՝ ՄԴՖ:

4.1.2 Նոր մասնաշենքի նախագծում

40. Դպրոցի նախագծվող նոր մասնաշենքը (1004 ք.մ) երեք հարկանի է՝ $h=3.4$ մ հարկերի բարձրությամբ, շենքի արևմտյան կողմում նախագծվում է մարզադահլիճը (292.5 ք.մ)՝ $h=5.5$ մ բարձրությամբ, նաև բացօթյա մարզահրապարակ (428.64 ք.մ): Շենքը նախատեսված է 300 աշակերտի համար: Մասնաշենքի հատակագծային լուծումներում (տես Հավելված 8-ից 10) նախատեսվում են .

- Առաջին հարկում՝ ճաշարան 50 աշակերտների համար, դպրոցի գրադարանը, բուժկետը, հանդերձարանը և ներառական դասասենյակներ:
- Երկրորդ հարկում՝ տարրական դպրոցի դասասենյակները, ննջասենյակները և շախմատի դասասենյակը:
- Երրորդ հարկում՝ տարրական դպրոցի դասասենյակները և վարչական մասը:

41. Մասնաշենքում նախագծվում են սանհանգույցներ՝ աշակերտների և աշխատակազմի համար, օժանդակ սենյակներ, թեքահարթակներ, հակահրդեհային մետաղական աստիճանավանդակ և վերելակ՝ սակավաշարժ խմբերի համար:

42. Այս մասնաշենքի երկրորդ և երրորդ հարկերում են նախատեսվում քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության դասասենյակները/լաբորատորիաներ: Բոլոր տարրական դասասենյակներում, բուժկետում, ինչպես նաև լաբորատոր դասասենյակներում նախատեսվում է տաք/սառը ջուր և լվացարաններ՝ ըստ գործող նորմերի:

43. Մանաշենքի արտաքին հարդարումը նախատեսվում է կատարել կարմիր տուֆով, սվադով և ներկով, բնական քարի դեկորատիվ անկանոն շարվածքով, գետնախարիսխը՝ բազալտով:

44. Ներքին հարդարումը նախատեսվում է գաջային սվադով և լատեքսային ներկով, սանհանգույցներում՝ կերամիկական սալիկապատումով: Հատակները միջանցքներում,

ռեկրեացիաներում և ճաշարանում նախատեսվում է պրեսգրանիտից, աշակերտական և ծառայողական սենյակներում և մարզադահլիճում՝ հատակի վինիլային ծածկից: Միջնորմները սենյակներում նախատեսվում է գիպսաստվարաթղթից, սանհանգույցներում՝ ջրակայուն, ձայնամեկուսիչ գիպսաստվարաթուղթ:

45. Փակ մարզադահլիճի առաստաղը նախագծվում է կախովի մոդուլային և կիրականացվի կոմպոզիտային նյութերից: Տանիքը նախատեսված է լանջավոր, ձևավոր ցինկապատ թիթեյա տանիքածածկից, ջրահեռացումը՝ արտաքին կազմակերպված: Պատուհանները նախատեսված են սպիտակ գույնի պլյումինե և մետաղապլաստե պրոֆիլներով, շենքի մուտքի դռները՝ պլյումինե ապակեփաթեթով, սենյակներինը՝ ՄԴՖ:

4.1.3 Ջրամատակարարում և ջրահեռացում

46. Շենքում նախագծված է սառը և տաք ջրամատակարարման, հակահրդեհային և կենցաղային ջրերի հեռացման կոյուղու ցանցերը:

47. Նախագծվող դպրոցի համալիրի արտաքին ջրամատակարարումը, համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների, նախատեսված իրականացնել փողոցով անցնող համայնքային ջրագծից, տեղադրելով ջրի դիտահոր՝ ՋԴՀ-1 ջրաչափական հանգույցով, փականներով և ՋՀՀ-1 դիտահոր՝ Փ100 հրդեհային հիդրանտով արտաքին հրդեհի մարման համար:

48. Դպրոցի մասնաշենքում նախատեսվում են ներքին ջրամատակարարման և ջրահեռացման նոր ցանցեր, որոնք նախատեսվում է մոնտաժել պողպատե-ցինկապատ պոլիպրոպիլենե խողովակներից: Ջրի մուտքագիծը նախատեսված է պոլիպրոպիլենե խողովակներով՝ $\Phi 75 \times 6.9$ մ տրամագծով: Նկուղային հարկում խողովակները մոնտաժվելու են առաստաղի տակ: Բաշխիչ խողովակները տեղադրվելու են 0.002-0.005 թեքությունով ջրարման ծորակների մուտքագծի ուղղությամբ:

49. Տաք ջրամատակարարումը իրականացվելու է կաթսայատանը տեղադրվող արագընթաց ջրատաքացուցիչների միջոցով, ինչպես նաև դպրոցի տանիքում նախատեսվող արևային ջրատաքացուցիչների միջոցով: Տաք ջրի համար նախատեսված են

պոլիպրոպիլենային խողովակներ պլումինե շերտով: Առաստաղի տակ, ինչպես նաև հատակի մեջ տեղադրվող տաք և շրջանառու խողովակները ջերմամեկուսացվելու են:

50. Հրդեհաշիջման ջրի ծախսը համաձայն նորմերի հաշվարկվում է 2 շիթ, յուրաքանչյուրը՝ 2.5 լ/վրկ: Հակահրդեհային ջրագիծն իրականացվելու է պողպատե եռակցովի խողովակներով:

51. Կենցաղային կեղտաջրերի հեռացման գործընթացը կազմակերպվելու է սանհանգույցի սարքերից /կոյուղու ելք K1/ ինքնահոս հավաքմամբ և հեռացմամբ նոր տեղադրվող կոյուղու դիտահոր (ԿԴՀ), որտեղից էլ՝ կեղտաջրերի կենսաբանական կայան: Կոյուղու ներքին ցանցը նախատեսված է կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակներից՝ Φ50, 110 տրամագծերով: Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերը նախագծված են հաշվի առնվելով նորմերով սահմանված թեքությունները:

52. Նախատեսվում է FBR-20 կենսաբանական կայան, որի տեխնիկական բնութագրերը բերված են աղյուսակ 2.1-ում, կայանը նախատեսվում է տեղադրել դպրոցի կաթսայատան հարևանությամբ (հյուսիս-արևելյան հատված), մոնտաժային սխեման ներկայացված է *հավելված 18. -ում*:

Աղյուսակ 2.1

FBR-20 կենսաբանական կայանի տեխնիկական բնութագրերը:

Անվանումը	Ցուցանիշը	
Կենցաղային կեղտաջրի ծավալը, խ.մ/օրական	15-20	
ԹԿՊ, մգ/լ	Մաք.կայանից առաջ	Մաք.կայանից հետո
	300	18
ԹԿՊ, մգ/լ	550	40
Կախված մասնիկներ	350	25
Հոսանքի ծախսը, կվտ/ժամ	0.75	
Երկարություն, մ	6.5	
Լայնություն, մ	2.15	
Բարձրություն, մ	2.4	

53. Ջրամատակարարման և ջրահեռացման հաշվարկային ծախսերը ներկայացված են աղյուսակ 2.2-ում:

Աղյուսակ 2.2

Ջրամատակարարման և ջրահեռացման հաշվարկային ծախսերը:

Համակարգի անվանումը	Ջրի ճնշումը մուտքի	Հաշվարկային ծախսեր			Ծանոթություն
		Մ ³ /ՕԸ	Մ ³ /ԺԱՄ	Լ/վԸԿ	
Ջրամատակարարում Ջ1+Տ3	25.0 մ	9.02	4.1	2.43	Հրդեհի դեպքում 2 x 2.5 լ/վրկ
Կոյուղի Կ1		9.02	4.1	3.83	

4.2 Գազամատակարարում և էլեկտրամատակարարման

54. Դպրոցի գազամատակարարման և էլեկտրասնուցման տեխնիկական պայմանները ձեռք կբերվեն գործող կարգի համաձայն:

55. Նախագծվող դպրոցի տանիքում կտեղադրվեն նաև արևային վահանակներ՝ 320 Վտ հզորությամբ, բազմաբյուրեղներ, թվով 100 հատ: Մշակված ֆոտովոլտային համակարգը բաղկացած է 4 խմբից և 7 շարքերից՝ համապատասխանաբար 6 x 15 և 1 x 10 հատանոց շարքերից: Վահանակների հատակագծումը տանիքում ներկայացված է հավելված 19-ում:

56. Նախագծվող կաթսայատան գազամատակարարումը նախատեսվում է 76 մմ տրամագիծ ունեցող, 280.8 գ.մ երկարությամբ խողովակաշարով և մոտ 270 մ հեռավորության վրա գտնվող վերգետնյա միջին ճնշման գազատարից: Կաթսայատանը նախատեսվում է տեղադրել ջրային 2 կաթսաներ՝ յուրաքանչյուրը 250 կվտ հզորության, բաժանաբար պողպատյա խողովակները Ø 57x3-L=10մ, Ø 32-L=7մ, Ø 20-L=9մ, Ø 15-L=4մ համապատասխան սողնակներով:

4.2.1 Ջեռուցում և օդափոխություն

57. Դպրոցի ջեռուցման գործընթացը նախատեսվում է կազմակերպել վերահատակագծված կաթսայատան (30 ք.մ) միջոցով, որի հեռավորությունը դպրոցի շենքից կազմում է 11 մ: Կաթսայատունը ևս նախագծվում է որպես ե/բ կառույց: Կաթսայատան շահագործումը կիրականացվի ջրային 250 կվտ հզորությամբ երկու կաթսաների միջոցով բնական գազի այրմամբ, իսկ ջերմության հաշվարկային ծախսերը գնահատվում են 6836 կկալ/ժ (7950 վտ):

58. Կաթսայատան գազմատակարարման գործընթացը կիրականացվի $d=76$ մմ տրամագծով խողովակներով (տես 56 կետ), իսկ ծխագազերի հեռացումը՝ $d=400$ մմ տրամագծով և $h=19$ մ բարձրությամբ ծխատարով:

59. Ջեռուցման նախագիծը կատարված է արտաքին -190°C /համաձայն F հարաչափի/ հաշվարկային ջերմաստիճանի համար: Դասասենյակների օդի ջերմաստիճաններն ընդունված են համաձայն նորմերի, մասնավորապես՝ միջանցքում, ճաշարանում, աստիճանավանդակում, գույքի պահոցում՝ 160°C , արհեստանոցում՝ 150°C , ընդունարանում, տնօրենի սենյակում, պահակի սենյակում, մարզիչի սենյակում, հանդիսությունների դահլիճում՝ 180°C , հանդերձարաններում՝ 220°C , մարզադահլիճում՝ 150°C :

60. Ջերմակիրը՝ ջուրը, կաթսայատնից մատակարարվելու է դպրոցի կառավարման հանգույց (աստիճանավանդակի տակ), որտեղից էլ սնող սանրախողովակի միջոցով բաշխվելու է մասնաշենքերի ջեռուցման համակարգեր: Ջեռուցման համակարգերը նախատեսված են ներքին մատակարարումով, երկխողովականի, ջրային փակուղային շարժումով: Մնող և հետադարձ խողովակները անցնում են հատակի վրայով՝ մասամբ հատակի կոնստրուկցիայի միջով, դռների հետ հատման տեղերում: Հատակի միջով անցնող խողովակները ջերմամեկուսացվելու են: Որպես ջեռուցման սարք նախատեսված են ջեռուցման պանելային մարտկոցներ: Ջեռուցման համակարգից օդի հեռացումը կատարվելու է «Մանսկու» օդային փականների միջոցով, որոնք տեղադրվելու են երրորդ

հարկի ջեռուցիչների վրա: Յուրաքանչյուր ջեռուցման մարտկոցի վրա տեղադրվում են նաև անջատիչ փականներ /վերևի և ներքևի/:

61. Դպրոցի մասնաշենքերում նախատեսված է ներածող-արտածող բնական և արհեստական օդափոխություն: Դասասենյակներում նախատեսվում է բնական օդափոխություն: Օդի արտածումը ևս բնական է, իրականացվելու է ուղղաձիգ օդատարերի միջոցով սենյակի միապատիկ ծավալի չափով:

62. Հանդիսությունների դահլիճում նախատեսված է արհեստական արտածում ԱԱ-1 կանալային օդափոխիչի միջոցով, որը տեղադրվելու է ձեղնահարկում, ինչպես նաև օդի ներածման արհեստական համակարգը՝ ներհոս սարքավորման միջոցով, նույնպես տեղադրվելու է դպրոցի ձեղնահարկում: Մարզադահլիճում ևս նախատեսված է արհեստական արտածում առանցքային օդափոխիչների միջոցով, որոնք տեղադրվում են պատի վրա և օդի ներածման արհեստական համակարգը ներհոս սարքավորման միջոցով նույնպես կտեղադրվի ձեղնահարկում: Արհեստական արտածման համակարգեր են նախատեսվում դպրոցի խոհանոցի, ցնցուղարանների, բուֆետի, գրադարանի և սանհանգույցների և հանդերձարանների համար: Առանձնացված արհեստական արտածման համակարգերը ցինկապատ թերթավոր պողպատից են և դուրս են բերվելու դպրոցի տանիքից ($h=0.5-0.7$ մ):

4.3 Շինարարական աշխատանքների կազմակերպում

63. Ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվող աշխատանքների շրջանակը ներառում է.

- գոյություն ունեցող մասնաշենքի (1**) վերակառուցում և ամրացում,
- հին մասնաշենքի ապամոնտաժում և նոր մասնաշենքի (2.1**) կառուցման աշխատանքներ, ներառյալ՝ կից կառուցվող մասնաշենքը (2.2**), մարզադահլիճը (3**) և գոյություն ունեցող կաթսայատան վերահատակագծման գործողությունները

- նոր կառուցվող բացօթյա սպորտային հրապարակ
- տարածքի վերականգում, բարեկարգման և կանաչապատման աշխատանքները:

64. Դպրոցի գոյություն ունեցող մասնաշենքի ամրացման և նոր մասնաշենքերի կառուցման շինարարության կազմակերպման նախագիծը մշակված է համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի (Հավելված 12.), ճարտարապետական և կոնստրուկտիվ գծագրերի, ինժեներա-երկրաբանական հետազոտության մասին եզրակացության և դպրոցի գոյություն ունեցող ամրացման ենթակա մասնաշենքի տեխնիկական վիճակի հետազոտության, եզրակացության հիման վրա:

65. Շինարարական աշխատանքները՝ ըստ ՇՆուԿ 3.01.01-85, կիրականացվեն երեք փուլերով՝

1. նախաշինարարական փուլ
2. մասնաշենքերի ապամոնտաժման շին-աշխատանքներ
3. մասնաշենքերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ

4.3.1 Նախաշինարարական աշխատանքների իրականացման փուլ

66. Համաձայն մշակված շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծի՝ *նախաշինարարական/նախապատրաստման աշխատանքների* փուլում կիրականացվեն շինարարական հրապարակի կազմակերպման և տարածքի նախապատրաստական գործողությունները, մասնավորապես կիրականացվեն.

- դպրոցի տարածքի ժամանակավոր մետաղական ցանկապատում
- հրապարակի լուսավորության ապահովման միջոցառումները
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքներ՝ ապահովելով շինարարական ճամբարում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, բիոզուգարան և լվացարան, աշղեկի աշխատասենյակ և այլն)

- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը
- շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները
- դպրոցի տարածքում գոյություն ունեցող շինության (9**) քանդում/ապամոնտաժում և շին աղբի տեղափոխում և հրապարակի մաքրում
- տարածքի համահարթեցում և հողային աշխատանքներ
- գոյություն ունեցող մասնաշենքի (1**) ամրացման համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերում նախատեսված քանդման/ապամոնտաժման աշխատանքների իրականացում:

67. Աշխատանքների շինարարության փուլում աշխատողների խմելու ջուրը առկա է բնութագրվող տարածքում (մերձակայքով անցնող համայնքային ջրազիծ), մասնավորապես խմելու նպատակով ջուրը կվերցրվի գոյություն ունեցող և վերակառուցվող մասնաշենքի սանհանգույցներից:

4.3.2 Ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում

68. Հիմնական մասնաշենքի ամրացման/վերակառուցման քանդման/ապամոնտաժման աշխատանքները կիրականացվեն վերնից ներքև ուղղվածությամբ և առաջարկվում է աշխատանքներն իրականացնել ներքոնշված հերթականությամբ: Նախքան քանդման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է անջատել մասնաշենքի էլեկտրասնուցումը և ջրամատակարարումը, որից հետո հաջորդաբար կիրականացվեն.

- տանիքի ապամոնտաժում
- միջնորմների ապամոնտաժում
- սվաղի քանդում/հեռացում
- միջհարկային հատակների ապամոնտաժում
- դռների, լուսամուտների տեղահանում
- ինժեներական ցանցերի ապամոնտաժում

69. Վերոհիշյալ աշխատանքների իրականացման համար առաջարկվող տեխնոլոգիան բերվում է ստորև.

- Տանիքի քանդումը կատարվում է տանիքի ակիքավոր թիթեղներից, որը կատարվում է ձեռքով: Թիթեղները քանդելուց հետո քանդվում է տանիքի փայտե կոնստրուկցիաներ, ե/բ ծածկի վրա գտնվող շերտերը և կատարվում է ծածկի սալերի մակերեսների մաքրում/ մերկացում: Քանդումից առաջացած նյութերը և շին. աղբը իջեցվում է կռունկի օգնությամբ անմիջապես մեքենաների թափքի վրա և երկրորդային օգտագործման նյութերը տեղափոխվում է պահեստավորման վայր, իսկ շին աղբը տեղափոխվում և թափոնակույտվում է աղբավայրում:
- Միջնորմները քանդելու համար կօգտագործել շարժական փայտամած, որի վրա կանգնելով քանդումը կսկսվի վերևից ներքև օգտագործելով լինգեր, մուրճեր և հարիչներ:
- Սվաղը քանդելուց առաջ անհրաժեշտ է այն լավ խոնավեցնել ՍՕ-20 տեսակի ներկացրիչով: Սվաղի քանդումը սկսել անկյունների կողմից, դռների և լուսամուտների շեպերից: Սվաղի քանդման համար օգտագործել էլեկտրամուրճ՝ ԻԷ-4203 տեսակի: Սվաղը քանդելուց հետո կատարել քարային շարվածքի կարերի մաքրում՝ օգտագործելով էլեկտրամուրճը:
- Փայտե հատակները քանդել ձեռքի գործիքների օգնությամբ, նախորոք հանելով շրիշակները: Կերամիկական սալիկներով հատակը և հատակի նախաշերտերը քանդել փխրեցնելով բետոնաջարդիչ գործիքով:
- Պատուհանների և դռների ապամոնտաժումն իրականացնելուց առաջ անհրաժեշտ է քերել և մաքրել շեպերի սվաղը, օգտագործել մուրճ և հարիչ, նախորոք հանել ապակեպատ փեղքերը և պատուհանագոգերը և հարիչների օգնությամբ քանդել շրջանակները, պատին ամրացնող հենակները, որից հետո տեղահանել շրջանակները և տեղափոխել պահեստավորման վայր:
- Ջեռուցման համակարգի ապամոնտաժումը իրականացնել գազաեռակցող կտրիչի օգնությամբ:

– Բոլոր տեսակի քանդման աշխատանքներից առաջացած շին. աղբը և նյութերը շենքի տանիքից և հարկերից կռունկի օգնությամբ կիջեցվի ավտոմեքենայի թափք և կտեղափոխվի նախատեսված վայր:

– Նախաշինարարական փուլում կիրականացվեն նաև կոմունիկացիաների վերատեղադրման, տեղափոխման և միացման աշխատանքները՝ գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

70. Գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդման/ապամոնտաժման աշխատանքներն իրականացվելու են ՀՀ կառավարության *N 87-Ս* (06.02.2019) *որոշման* համաձայն: Սույն որոշման կետ 2-ով սահմանված կարգով դպրոցի շենք-շինությունների քանդման արդյունքում առաջացող շինանյութը սեփականության իրավունքով անհատույց կհանձնվի դպրոցի կառուցման աշխատանքներն իրականացնող շինարարական կազմակերպությանը: Ապամոնտաժման աշխատանքների ծավալները հաշվի առնված չեն դպրոցի ծավալա-նախահաշվային փաստաթղթերում: Ապամոնտաժման աշխատանքների ընթացքում առաջացած շինարարական աղբի տեղափոխման աշխատանքները նույնպես կիրականացվեն շինարար կապալառուի սեփական միջոցների հաշվին:

71. Մասնաշենքերի ապամոնտաժման գործողությունների տևողությունը գնահատվում է մոտ 2 ամիս:

4.3.3 Կառուցապատման աշխատանքների կազմակերպում

72. Տարածքի հորիզոնական հարթեցման, հիմքերի խրամատների և փոսորակների հողային աշխատանքները կատարելուց առաջ նախատեսվում է իրականացնել տարածքում առկա բուսահողի (106.25 խ.մ) մերկացում, կուտակում և պահպանում հրապարակի հատուկ առանձնացված տեղում հետագայում տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներում օգտագործելու նպատակով:

– Հիմքերի խրամատների և փոսորակների հողային աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեքենայացված եղանակով (ՅՕ-3323A մակնիշի էքսկավատոր):

- Հիմքերի տակ գրունտը (10-15 սմ շերտով) կմշակվի ձեռքով՝ համապատասխան գործիքների կիրառմամբ:
- Հեռացված գրունտը (1588.5 խ.մ) պահպանվում է փորվածքների հետլիցքի (700 խ.մ) նպատակով, մնացած մասը (888.5 խ.մ) տեղափոխվում է աղբավայր:
- Հիմքերը կառուցելուց հետո հողային հետլիցքն անհրաժեշտ է իրականացնել ըստ շերտերի տոփանումով՝ հետլիցքն իրականացվում է բուլդոզերով, մասամբ նաև ձեռքով:
- Միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների իրականացման համար առաջարկվում է գույքային կադապարամածի կիրառումը:
- Կոնստրուկցիաների ամրանավորումն առաջարկվում է իրականացնել ինչպես առանձին տողերով, այնպես էլ՝ ամրանային կմախքներով և ցանցերով: Բետոնացումից առաջ անհրաժեշտ է ստուգել ամրանի, միջադիրների և կադապարամածի տեղադրման ճշտությունը, ամրանները պետք է մաքրված լինեն կեղտից և ժանգից:
- Բետոնի խտացումն անհրաժեշտ է իրականացնել խորքային և մակերեսային թոթոխչներով:
- Բետոնախառնուրդի առաքումը առաջարկվում է կատարել KAMA3-55111-070 ABC-5 ավտոբետոնախառնիչով և տեղադրման վայր է տրվում ավտոնաբետոնապոմպի կամ վերամբարձի միջոցով:
- Որպես հիմնական մոնտաժային միջոց ընգրկված է թոթուռավայր MKT-25 B ամբարտիչ (կռունկ):
- Մարդկանց շարժումը բետոնացված մակերևույթների վրա և կադապարամածի տեղահանումը թույլատրվում է բետոնի 1.5 ՄՊԱ ամրության ձեռքբերումից հետո: Հիմքի և սյան կադապարամածի քանդումը թույլատրվում է բետոնի նախագծային 70% ամրության ձեռք բերումից հետո, ծածկի համար՝ 80%:
- Գոյություն ունեցող դպրոցի ամրացման աշխատանքները նախատեսված է իրականացնել տորկրետ եղանակով պատերի ամրացմամբ, իսկ ուժեղացումը՝ միաձույլ ե/բ շրջանակներով և դիաֆրագմաներով: Նախքան տորկրետացումն անհրաժեշտ է սվաղը, քանդված պատերի մակերեսները մաքրել փոշուց և տեղադրել նախագծով նախատեսված տորկրետացման ամրանե ցանցերը և այլ տեղամասերում, որտեղ կառուցվելու են

նախագծով նախատեսված միաձույլ ե/բ շրջանակներ և դիաֆրագմաներ, տեղադրում է դրանց ամրանե կարկասները: Շրջանակների և դիաֆրագմաների բետոնացումը կատարվելու է տորկրետացման աշխատանքները ավարտելուց հետո:

Շինաշխատանքների իրականացումը կիրականացվի մրցութային կարգով ընտրված շինարար կապալառուի կողմից: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառուի արտադրական բազայից: Բետոնը և շաղախը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացած տրանսպորտային միջոցներով: Առաջարկվում է նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և ամրանե կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փախադրամիջոցներով բերվում են շին.հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորումը և տեղադրումը:
- Բետոնե խառնուրդը միաձույլ բետոնե և ե/բ կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում է անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով:
- Հարդարման նյութերը կարող են առաքել ինչպես անմիջապես շին.հրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա հետագա առաքման նպատակով:

73. Դպրոցի կառուցապատման աշխատանքները հաշվարկվում է 20 ամիս /600 օր Ալբոմ-7 ՇԿՆ թերթ 2-2/: Աշխատանքների հերթականությունը և ժամանակացույցը ներկայացվում է *Հավելված 16*: Շինարարության ընթացքում պահանջվող ռեսուրսների քանակը բերվում է Աղ.3, իսկ հիմնական աշխատողների թիվը գնահատվում է 26 մարդ, որից՝

- բանվորներ- 21 մարդ
- ինժեներներ- 2 մարդ
- անվտանգության աշխատող – 2 մարդ
- այլ աշխատողներ- 1 մարդ

Աղյուսակ. 3

Շինարարության ժամանակ պահանջվող ռեսուրսների քանակը

Անվանումը	Չափման միավորը	20 ամիս (շին. տևողությունը)
Էլեկտրաէներգիա	ԿՎա	63.8
Վառելիք	տ	7.6
Ջուր	լ/վրկ	0.15
Խտացրած օդ (կոմպրեսոր)	հատ	1

4.3.4 Անվտանգության տեխնիկայի հարցեր և հակահրդեհային միջոցառումներ

74. Շինարարական մոնտաժային աշխատանքներ կատարելու ժամանակ անհրաժեշտ է խիստ պահպանել ՇՆՈՒԿ III-04-80 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» ձեռնարկի պահանջներով, մասնավորապես.

- Նախքան աշխատանքի սկսելը կկատարվի շին.հրապարակի ժամանակավոր ցանկապատում և կտեղադրվեն մուտքը արգելող ցուցափեղկեր/նշաններ:
- Շինարարությունում շահագործվող կռունկը պետք է անցած լինի անվտանգության տեխնիկայի փորձաքննության և գրանցված լինի «Տեխնիկայի անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ռեգիստրում:
- Հակահրդեհային անվտանգությունը շին.հրապարակում, աշխատատեղում և աշխատանքի տեղամասերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան «Հակահրդեհային անվտանգության կանոններ» պահանջներին համապատասխան:
- Մասնաշենքի ներսում քանդման աշխատանքներ սկսելուց առաջ անհրաժեշտ է անջատել ջրամատակարարումը, ջերմամատակարարումը, գազամատակարարումը և էլեկտրամատակարարումը:

- Մինչև աշխատանքների սկսելը աշխատողներին պետք է հրահանգավորել անվտանգության տեխնիկայի մասին: Բարձրության վրա աշխատանքներն անհրաժեշտ է կատարել միայն գույքային լաստակների միջոցով:
- Արգելվում է աշխատանքը կատարել դնովի աստիճանի կամ պատահական գույքի միջոցով:
- Բանվորների աշխատանքների պաշտպանությունը պետք է ապահովվի վարչակազմի կողմից, նրանց անհատական պաշտպանական միջոցներ տրամադրմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ և այլն):
- Մեխանիզմների աշխատանքը ստուգել գործարկումից առաջ պարապ վիճակում:
- Տանիքի աշխատանքների իրականացման և այլ տեղերում, որտեղ չկա սահմանափակող ցանցեր, ապահովել աշխատողների անվտանգությունը պահպանիչ գոտիներով, որը պետք է ամրացվի կոնստրուկտիվ ճշտված և հուսալի էլեմենտից:
- Եռակցման աշխատանքներ իրականացնելու ժամանակ հետևել, որ էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված:
- Խտացված գազով բալոնը տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով: Չի կարելի բալոնին մոտենալ յուղոտված հագուստով, արգելվում է գալոգեներատորի մոտակայքում ծխելը:
- Արգելվում է տանիքում աշխատանքներ իրականացնելը, մշուշի, ամպրոպի և քամու 6 բալ արագությամբ գերազանցման դեպքում:

5 ԵԼՔԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը

75. ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան համայնքի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցի հիմնական մասնաշենքի ամրացման և նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներն իրականացվելու են ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան համայնքի 6 փողոց 2-րդ փակողի հասցեում գործող համանուն դպրոցի տարածքում: Բնութագրվող տարածքը ձևավորվել է հրաբխային ժայթքումներից և ներկայացված է տարբեր տեսակների ապարներով (բազալտներով անդեզիտներով անդեզիտա-դացիտներով և տուֆերով):

76. Ուսումնասիրվող տարածքը *գեոմորֆոլոգիական տեսակետից* մտնում է Արագած լեռան ստորին լանջերի մեջ: Արևելքից այն շրջափակված է Արայի լեռան լանջերով և Եղվարդի սարահարթով, իսկ հյուսիսից և արևմուտքից՝ Արագածի լանջերով: Օհանավան գյուղը արևելքից հարում է Քասաղ գետի կիրճին, որը ունի զառիթափ լանջեր և ներկայացված է հրաբխային ապարներով: Տեկտոնական տեսակետից բնութագրվող տարածքը գտնվում է Ախուրյանի խորքային խզվածքային գոտում, Քասաղ գետի կիրճի բարձրադիր աջ ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից 3կմ է, ծովի մակերևույթից բարձրությունը՝ 1330 մ: Հետազոտվող տարածքը իրենից ներկայացնում է բաց տարածք, թեքությամբ դեպի հարավ: Տարածքի ռելիեֆը թույլ բլրավետ է:

77. *Երկրաբանական տեսակետից* տաղամասը ներկայացված է նեոգենի դարակարգի պլիոցենային հասակի, նաև չորրորդական հասակի լավաներով ծածկված պրոյուվիալ, էյուվիալ և դեյուվիալ նստվածքներով: Այս ապարները տարածաշրջանում հիմնականում մերկանում են Քասախ գետի կիրճում, իսկ մնացած հատվածներում նրանք ծածկված են վերը նշված ոչ մեծ հզորության ժամանակակից առաջացումներով, որոնք ներկայացված են ավազակավերով, կավավազներով, բեկորա-խճաքարային և գետի հունային մասերում գլաքարա-ճալաքարային նստվածքներով:

78. Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը համարվում է լավ ինֆիլտրացվող գոտի, որը հանդիսանում է մթնոլորտային տեղումների հիմնական մասի տեղափոխումը ճեղքավորված լավաների միջոցով դեպի Արարատյան ստորգետնյա ջրավազան: Բացի վերը նշվածից ինֆիլտրացվող ջրերի մի մասը մեծ ելքեր ունեցող աղբյուրների տեսքով դուրս են գալիս երկրի մակերես Քասախ գետ աջափնյա հատվածներում: Ըստ գրական տվյալների՝ հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են ստորերկրյա ջրերի հոսք, որը կապված է Քասախ գետի հին հունի հետ: Ստորերկրյա ջրերի մակարդակը տատանվում է 35-65մ խորություններում: Ներկայումս այդ ջրերի մի մասը խորքային հորերի միջոցով օգտագործվում է շրջակա համայնքների ջրամատակարարման և ոռոգման համար: Օհանավան համայնքի ջրամատակարարումը կատարվում է Սաղմոսավանքի և Արտաշավանի աղբյուրներից:

79. Կատարված ուսումնասիրությունների արդյունքում տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները գնահատվում են բարենպաստ նախագծվող դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման համար:

5.2 Սեյսմիկ բնութագրերը

80. Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, Երևան քաղաքը գտնվում է սեյսմիկ երկրորդ և երրորդ գոտիներում, գրունտների հնարավոր արագացման առավելագույն մեծությունը կազմում է $A_{\max}=0.3g$:

5.3 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը

81. Գոյություն ունեցող դպրոցի ուսումնասիրվող գոտին համաձայն «Շինարարական կլիմայաբանության» (ՀՀՇՆ II-7.01-2011) գտնվում է «տաք» կլիմայական շրջանում: Բնութագրվում է ցուրտ ձմեռներով և շոգ ամառներով, չորային և խիստ ցամաքային կլիմայով:

82. Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է $+41^{\circ}\text{C}$, իսկ բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -25°C (Աշտարակի կայանի տվյալներ): Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 368մմ: Տարվա մեջ ձմռանը գերակշռում են արևելյան, իսկ ամռանը՝ հարավ-արևմտյան ուղղության քամիները, միջին արագությունը կազմում է 2-3մ/վ: 25 տարվա ընթացքում հնարավոր են 31մ/վրկ, 50 տարվա մեջ՝ 35մ/վ ուժգնության քամիներ: Քամու արագության ճնշումը՝ 45կգ/մ^2 :

83. Ձյան ծածկույթի հաստությունը հասնում է 55սմ, ձյան բեռնվածքի ճնշումը 70կգ/մ^2 է և կայուն ձյան ծածկույթ չի ձևավորվում: Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 70սմ:

5.4 Օդային ավազան

84. Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Օհանավանի համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

85. ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի, Ալավերդի, Կապան, Ծաղկաձոր քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները ներկայացված են

Աղյուսակ 4-ում, որոնց հաշվարկների հիմքում ընկած տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակը:

86. Օհանավանի համայնքապետարանի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ 2020 թվականին Օհանավան համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 2 527 մարդ: Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից, Օհանավանի համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաները գնահատվում են հետևյալ տիրույթում. *փոշու մասնիկներ՝ 0,2 մգ/մ³, ածխածնի մոնօքսիդ՝ 0,4 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,008 մգ/մ³ և ծծմբի երկօքսիդ՝ 0,02 մգ/մ³*: Նշված մակարդակները գտնվում են ՀՀ գործող նորմերի (ՀՀ որոշում 160-Ն, 2006 թ.) սահմանում, բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց մակարդակը օդային ավազանում մոտ 1.33 անգամ գերազանցում է գործող ՍԹԿ-ն ($ՍԹԿ_{\text{փոշի}} = 0,15 \text{ մգ/մ}^3$), ինչուս հիմնական ներդրումը կարելի է վերագրել բնական աղբյուրներին, հաշվի առնելով այն, որ համայնքում բացակայում են անթրոպոգեն աղտոտման աղբյուրները:

Աղ. 4 *Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի:*

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ³)			
	Ընդհանուր փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

5.5 Հողօգտագործումը

87. Կառուցապատվող տարածքը հանդիսանում է Օհանավանի դպրոցին ՀՀ կրթության և գիտության նախարարությանը անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույք N 01-007-0343-0002 (*Հավելված 13*):

88. Դպրոցի տարածքը, համաձայն սեփականաշնորհման վկայականի, կազմում է 0.564 հա: Տարածքի գոյություն ունեցող ծածկույթը ներկայացված է ասֆալտե, խճավազային և հողային ծածկույթի տեսքով:

5.6 Ջրային ռեսուրսներ

89. Կառուցապատվող դպրոցի տարածքում և մերձակայքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Հիդրոերկրաբանական տեսակետից կառուցապատվող տարածքում գրունտային ջրերը չեն հայտնաբերվել մինչև 35 մ և ավելի խորությունում:

5.7 Բուսական աշխարհ

90. Բնութագրվող տեղանքը գտնվում է արդեն իսկ յուրացված և զարգացած համայնքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները:

91. Տարածքում առկա է պտղատու այգի, որը գտնվում է գոյություն ունեցող դպրոցի վերակառուցվող մասնաշենքի անմիջապես հարևանությամբ և դպրոցի նախագծվող նոր մասնաշենքը խանգարում է այգու պահպանմանը: Որպես այգի օգտագործվող հողակտորը հանդիսանում է դպրոցի սեփականություն, սակայն այգին տնկվել և մշակվում է ապօրինաբար: Դպրոցի տարածքում բացակայում է այլ բուսականությունը, ինչպես նաև ռոռզման ջրի համակարգը:

6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ

92. Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կանխատեսվում են շինարարության փուլում, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության տևողությամբ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով դպրոցի կառուցապատվող տարածքը: Բոլոր ազդեցությունները գնահատվում են կառավարելի՝ բնապահպանական միջոցառումների պլանում մշակված միջոցառումների արդյունավետ իրականացման դեպքում:

6.1 Շինարարության փուլ

6.1.1 Օդային ավազանի աղտոտվածություն

93. Ծրագրի ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում: Հորատման, բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times B \times G \times 10^6 / 3600, \text{ գ/վ}$$

որտեղ՝

K_1 – փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K_2 – փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէռոզոլային մասնիկների, 0.02

K_3 – գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 2.5

K_4 – գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K_5 – գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K₆–ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B–ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 4 ամիս կամ

4 ամիս x 22 օր x 8 ժամ = 704 ժամ/շինարարություն :

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է 1 588.5 իւ.մ կամ 2 541.6 տ

2541.6 տ. /704 ժամ=3.61 տ/ժամ

$Q=(0.05 \times 0.02 \times 2.5 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 3.61 \times 10^6) / 3600 = 0.06$ գ/վ

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$0.06 \text{ գ/վ} \times 704 \text{ ժ/շ} \times 3600 \text{ վ/10}^6 = 0.15$ տ

94. Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված և չեն դիսպերսվի դպրոցի սահմաններից դուրս՝ հաշվի առնելով մասնիկների մեծ չափերը և նրանց արագ գրավիմետրիկ նստեցումը: Հետևաբար, կանխատեսվում են, որ արտանետումները չեն գերազանցի թույլատրված նորմերը, իսկ հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կբացառվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացմամբ /տե՛ս Հավելված 1, ԲԿՊ, 5.1-Օդի աղտոտման և փոշու կառավարում/, մասնավորապես՝

- շինարար կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակի ջրցանում,
- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ և սահմանափակ արագությամբ (չի գերազանցի 30կմ/ժ արագությունը),
- փոշի առաջացնող նյութերը (ավազ, խիճ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում,
- աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը:

95. Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափագրումներ, որոնք կհամեմատվեն գործող օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

6.1.1 Աղմուկի և թրթռումների ազդեցություն

96. Աղմուկի համեմատաբար բարձր մակարդակներ գնահատվում են գործող դպրոցի շենքի քանդման/ապամոնտաժման աշխատանքների ընթացքում, սակայն հաշվի առնելով այն, որ ամբողջովին քանդումը նախատեսվում է իրականացնել ապամոնտաժման եղանակով՝ բացառելով խոշոր տեխնիկայի կիրառումը, ապա աղմուկի հնարավոր մակարդակները չեն գերազանցի ՀՀ ազգային նորմերը:

97. Շին աշխատանքների ընթացքում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում, բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 14:00-ից 18:00:

98. Շինարարական գործողությունների ընթացքում առաջացող հնարավոր թրթռումների դեպքում ազդեցություններ հարևան ազդակակիրների վրա չեն գնահատվում՝ հաշվի առնելով տեղամասի մերձակայքում գտնվող ազդակակիրների հեռավորությունը դպրոցի տարածքից (≥ 50 մ):

99. Շինարարական աշխատանքների ընթացքում շինարար կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ թրթռումների գործող նորմերը, քանի որ ծրագրի շրջանակում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը կվերացվի շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին, բերելով վերջիններս իրենց նախնական վիճակին:

100. Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *Հավելված 1.-ում* (տես 5.2 ենթաբաժին, Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարում):

101. Ծրագրի շրջանակում հնարավոր բողոքների դեպքում նախատեսվում է իրականացնել ադմոնիկ և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ:

6.1.2 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

102. Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար:

103. Շինաշխատանքների ընթացքում առաջացած հնարավոր փոշու մակարդակները կնվազեցվեն ջրցանի իրականացմամբ:

– *Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսի հաշվարկը բերվում է ստորև.*

$$V = S \times K \times T \times K_1$$

որտեղ՝

S – ջրցանվող տարածքի մակերեսն է՝ 3 622.22 ք. մ

K – 1 մ² օրական ջրցանի նորմատիվն է՝ 0.0015 մ³,

T – ջրցանի օրերը (տաք և չորային եղանակին)՝ 22 օր x (20 -6 (նոյեմբերից ապրիլ) ամիս = 308 օր

K₁– ջրցանի օրական քանակը՝ 1

Այսպիսով՝ $V = 3\,622.22 \times 0.0015 \times 308 = 1\,673.47$ մ³/շինարարություն ժամանակ

Շին աշխատանքների ընթացքում ջրցանի նպատակով ծախսվող ջրի քանակը կկազմի 1 673.47 մ³:

– *Կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար անհրաժեշտ ջրի ծախսի հաշվարկը ներկայացվում է ստորև.*

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝

n – տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է՝ 5 մարդ

N - ջրածախսի նորման՝ 0.016 մ³,

n₁ - բանվորների թիվն է՝ առավելագույն 21 մարդ

N₁ - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025 մ³/մարդ օր

T-աշխատանքային օրերի առավելագույն թիվը ամբողջ շինարարության ընթացքում ամբողջ շինարարության ժամանակ՝ 22 օր x 20 ամիս= 440 օր :

Այսպիսով՝ $W = (5 \times 0.016 + 21 \times 0.025) \times 440 = 266.2 \text{ մ}^3 / \text{շինարարություն ժամանակ կամ } 0.605 \text{ մ}^3/\text{օրական:}$

104. Շինարարական աշխատանքներում և բանվորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը ինչպես և նախկինում կվերցրվի դպրոցի տարածքով անցնող համայնքային ջրագծից:

105. Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ չըլային համակարգերի վրա չեն կանխատեսվում, քանի որ տեղամասին կից չկան ազդեցության ենթակա ջրային մարմիններ: Անուղղակի ազդեցություններ չըլային համակարգերի վրա ևս չեն կանխատեսվում, քանի որ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ՝ բացառելով շին-մեքենաների երթևեկության ընթացքում հնարավոր արտանետումները:

106. Շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում չի կանխատեսվում՝ հաշվի առնելով դրանց բնույթը, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները տարածքից:

107. Հնարավոր կեղտաջրերի առաջացման դեպքում հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա (≥ 5 խ.մ տարողունակությամբ), որտեղ կեղտաջրերի (բետոնաջրեր և այլն) հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում: Կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *Հավելված 1.-ում*:

6.1.3 Թափոնների առաջացում և կառավարում

108. Շինարարական աղբի կուտակումը կարող է հանգեցնել հողային համակարգի արտաքին շերտի աղբոտվածության: Նշված ազդեցություններից խուսափելու համար շինաղբը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կանոնավոր կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև կանոնավոր կերպով (ամենաուշն երեք օրը մեկ) տեղափոխվելու է տեղամասից 3.5 կմ հեռավորության վրա գտնվող վայր՝ համաձայն համայնքապետարանի կողմից տրամադրված տեղեկանքի (*հավելված 17*):

109. Շինարարական աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ դպրոցի մասնաշենքերի ապամոնտաժումից և տարածքի բարեկարգման աշխատանքների ընթացքում գնահատվում են IV և III դասի վտանգավորության թափոնների առաջացում՝ ստորև ներկայացվող տեսակային կազմով.

Թափոնի անվանումը	Ծածկագիրը	Վտանգավորության դասը
շենքերի քանդումից առաջացած շին աղբ	91200601 01 00 4	IV
շինարարության փայտանյութի թափոններ	91200601 01 00 4	IV
պատի բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված սալիկներ	39901200 01 00 4	IV
ասֆալտի և ասալտբետոնի խառնուրդի մնացորդներ	31401200 01 00 4	IV
կարծր տեսքով բիտում և ասֆլատ	31403502 01 00 4	IV
«Կնցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)»	91200400 01 00 4	IV
«Սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ»	54101100 02 03 3	III
«Բանեցված շարժիչի յուղերի թափոններ»	54100201 02 03 3	III

110. Շինարարական թափոնների կառավարումը (բացառությամբ փայտանյութի) կիրականացվի ՀՀ կառավարության № 30 արձանագրային որոշման համաձայն, կտեղափոխվի և կթափոնակույտվի համայնքապետարանի կողմից թույլատրված վայրում:

111. Ապամոնտաժման ընթացքում գոյացած «Շինարարության փայտանյութի թափոնները» գնահատվում են երկրորդայի օգտագործման համար պիտանի: Վերջիններս կվերամշակվեն և կօգտագործվեն որպես երկրորդային հումք կապալառուի կողմից այլ շին աշխատանքներում: Այլ նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ, դոներ, պատուհաններ, խողովակներ և այլն) կտեսակավորվեն և նույնպես կօգտագործվեն որպես երկրորդային հումք:

112. Գործունեության ընթացքում ապամոնտաժման գործողություններից գոյացած շինարարական աղբը գնահատվում է շուրջ 1758.62 տ, իսկ կառուցապատման աշխատանքների ընթացքում առաջացած շին աղբը/ավելորդ գրունտ կկազմի 888.5 խ.մ:

113. Գործունեության ընթացքում գոյացած կենցաղային աղբը (գնահատվում է ≤ 3 կգ/օր) կհավաքվի հրապարակում տեղադրվող կենցաղային աղբի համար նախատեսվող փակ տարաներում և կանոնավոր կերպով կհեռացվի հասարակական աղբամաններ:

114. Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուղերի բանեցված մնացորդները (գնահատվում են ≤ 20 լ) կհավաքվեն և կպահվեն հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում կհանձնվեն վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության: Հրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը:

115. Բնապահպանական կառավարման պլանում նախատեսված գործողությունների շրջանակում կբացառվեն տարածքի կանաչ գոտիներում առկա բուսահողի վրա անուղղակի ազդեցությունները, ինչպիսիք են թափոնների տեղադրում, կեղտաջրերի հեռացում (տես Հավելված 1, 5.4 ենթագլուխ՝ Բուսահողի կառավարման միջոցառումներ):

6.1.4 Հողային համակարգերի վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումներ

116. Ներկայացվող գործունեության ընթացքում կիրականացվի 106.25 խ.մ բնահողի մերկացում և ժամանակավոր պահպանում հրապարակի հատուկ հատկացրված վայրում: Ժամանակավոր պահպանվող բնահողը հետագայում կօգտագործվի տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներում:

117. Ազդեցություն ենթակա բուսահողի ժամանակավոր պահպանումը կիրականացվի 2մ-ը չգերազանցող կույտերի ձևով և պաստառներով ծածկված վիճակում: Բուսահողի պահպանման միջոցառումները առավել մանրամասն նկարագրված են բնապահպանական միջոցառումների ծրագրում *Հավելված 1.-ում* (2. Ենթաբաժին՝ Բուսահողի պահպանում և կառավարում), իսկ հիմնական կանխարգելիչ միջոցառումները բերվում են ստորև.

- հրապարակում քայուղերը և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մատաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը,
- նախատեսվող գործունեության ընթացքում ինչպես նշվեց մեքենա-սարքավորումների լիզքավորումը, քայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողությունները կիրականցվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և հնարավոր ռիսկերը: Նշված ռիսկերի կառավարման միջոցառումները մանրամասն ներկայացված են *Հավելված 1.-ում* (5 և 6 ենթաբաժիններ՝ Թափոնների կառավարում և արտակարգ իրավիճակների կառավարում):

6.1.5 Ազդեցություն բուսական աշխարհի վրա

118. Ներկայացվող գործունեության ընթացքում ազդեցության կենթարկվեն թվով 31 հատ պտղատու ծառեր, որոնք գտնվում են դպրոցի ամրացվող մասնաշենքի հարևանությամբ առկա հողակտորի (զավթած հողակտոր) վրա, որը դպրոցի

սեփականություն հանդիսացող տարածք է, սակայն օգտագործվում է ապօրինի: Նշված ծառերը նախատեսվում է արմատախիլ անել և փայտանյութը հանձնել ծառերի տիրոջը՝ դպրոցի տնօրենի և նշված անհատի միջև առկա համաձայնության (ըստ անհրաժեշտության կկցվի հանդիպման արձանագրությունը) հիման վրա (ծառերի հետացման վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է հայտին կից):

119. Դպրոցի կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է նոր գազոնապատ 672.57 ք.մ գոտու ստեղծում և կտնկվեն թվով 5 սյունաձև թույաներ, 9 հատ սողացող գիհի, սամշիտ 1 հատ: Բուսականության հետագա խնամքը կհանձնվի դպրոցի տնօրինությանը, իսկ ոռոգումը կիրականացվի նախատեսվող ոռոգման համակարգի միջոցով (տես պարագրաֆ 36):

120. Նշված աշխատանքները կիրականացվեն տարածքի բուսահողով զբաղեցրած հատվածներում, ինչպես նաև կօգտագործվի տարածքից մերկացված և պահպանվող բուսահողը, և լրացուցիչ բուսահողի մատակարարման կարիք ներկայացվող գործունեության ընթացքում չի առաջանա:

121. Շինարարության ընթացքում տարածքում առկա բուսականության պահպանության միջոցառումները ներառվել են ԲԿՊ-ում /տես *Հավելված 1* ԲԿՊ, 5.3-Բուսականության պահպանում և կառավարում/:

6.1.6 Աշխատանքի անվտանգություն և առողջություն

122. Ծրագիրը մեծ անդրադարձ է կատարում հանրության անվտանգության և առողջության, ինչպես նաև շինարարական կազմակերպության աշխատողների անվտանգության և առողջության ապահովման հարցերին, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

123. Շինհրապարակում առողջության և աշխատանքային անվտանգությանն ուղղված կանոնները/միջոցառումները մանրամասն նկարագրված են 4.3.4 ենթաբաժնում, ինչպես

նաև կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի, որոնք համալիր ներկայացված են ԲԿՊ-ի «Առողջության և աշխատանքի անվտանգության պլան», ինչպես նաև «Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան» ենթաբաժիններում (տես *Հավելված 1, ԲԿՊ*): *Հավելված 4-ում* բերվում է նաև արտակարգ պատահարի հաշվետվության ձևը:

6.1.6 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները

124. Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- Հրդեհի առաջացում
- Հեղուկ նյութերի արտահոսք
- Աշխատողների վնասվածքներ
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարներ

125. Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:
- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:
- Բանվորական և դեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ անթափանց տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան (ձևաչափը տես Հավելված 4), որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել: Բոլոր գրանցամատյանները կվերահսկվեն և կուսումնասիրվեն ՀՏՁՀ-ի կողմից բնապահապանական և սոցիալական մոնիտորինգային այցելությունների ընթացքում, անհրաժեշտության դեպքում կձեռնարկվեն իրազեկության բարձրացման միջոցառումներ:
- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:
Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովվման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

6.2 Շահագործման փուլ

6.2.1 Օդային ավազանի աղտոտվածություն

126. Ջեռուցման շրջանում գնահատվում են կաթսայատան շահագործմամբ պայմանավորված ածխածնի եւ ազոտի օքսիդների արտանետումներ: Արտանետվող օքսիդների կոնցենտրացիաները մթնոլորտի գետնամերձ շերտում արագ ցրման հետեւանքով չեն գերազանցի գործող ՍԹԿ-ները, բացի այդ ժամանակակից նոր

կաթսաների տեղադրումը, ինչպես նաև նախատեսվող արևային էներգիայի աղբյուրների և տաք ջրամատակարարման լուծումները եւս կնպաստեն ջեռուցման շրջանում բնական գազի օգտագործման, հետևաբար նաև արտանետումների քանակի զգալի կրճատմանը:

7 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

7.1 Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները

127. Ծրագրի համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, ինչպես նաև ԱԶԲ բնապահպանական անվտանգության սկզբունքներին նախատեսվում է ապահովել բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) միջոցով: ԲԿՊ պարունակում է Ծրագրի բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն և շահագործում) կանխատեսվող հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներն, ինչպես նաև մոնիտորինգի գործողությունները՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: Ծրագրի համար մշակված ԲԿՊ-ն ամբողջական ներկայացված է *Հավելված 1-ում*:

128. ԲԿՊ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ի իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

129. Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող ազդեցությունները մեղմացնող և/կամ բացառող հիմնական բնապահպանական և աշխատանքի և առողջության ապահովման միջոցառումներն, որոնք պատշաճ ձևով կիրականացվեն ենթածրագրի իրականացման ընթացքում.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում
- շինարարական աղբի կանանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև հրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամաններ

- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ
- աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին մինչև ժամը 18:00
- շինարարական նյութերի ձեռք կրերվեն լիցենզավորված մատակարարից
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե կամ ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա
- ենթածրագրի ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ
- շինարար կապալառուն պարտավոր է ապահովել աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմին ապահովել սեզոնային արտահագուստով և անվտանգության սաղավարտներով
- տարածքում կանաչապատ գոտիների ընդլայնում, ինչպես նաև նոր արժեքավոր ծառատեսակների տնկում և սիզամարգերի ստեղծում:

130. Ենթածրագրի շրջանակում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը (առանց հարկերի) գնահատվում է 1 013 985 ՀՀ *դրամ*: Նշված արժեքը (Ադ. 4) ներառում է նախագծման փուլում՝ տեղեկատվության հրապարակման և հանրային ծանուցման, բնապահպանական փորձաքննության համար նախատեսվող ծախսերը, շինարարության փուլում՝ շինարարական աղբի հեռացման, բուսահողի մերկացման և պահպանման, կանաչապատման աշխատանքները: Նշված միջոցառումների ծախսերը հաշվի են առնված դպրոցի նախագծի ծավալաթերթերում: Բնապահպանական կառավարման պլանում ներկայացված մնացած միջոցառումները շինարար կապալառուն կիրականացնի ենթածրագրի շրջանակում հատկացվող օժանդակ ծախսերի գումարից, որը կազմում է ծրագրի արժեքի մոտ 2 %-ը:

Աղյուսակ. 4

Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքները (առանց հարկերի):

Մեղմացնող միջոցառումը	Միավորը	Ծավալը/ Քանակը	Գումարային արժեքը (ՀՀ դրամ)	Ժամանակացույցը
հանրային ծանուցում	հատ	2	10 000	նախագծման փուլ
բնապահպա նական փորձաքննու թյուն	-	1	15 000	նախագծման փուլ
շին աղբի տեղափոխու մ	խ.մ	888.5	651 028.4	շինարարության փուլ
բուսահողի մերկացում և պահպանում	խ.մ	106.25	314685	շինարարության փուլ, բարեկարգման աշխատանքներ
սիգամարզի տնկում	ք.մ	610	8272	շինարարության փուլ, բարեկարգման աշխատանքներ
ծառերի տնկում	հատ	15	15 000	
Ընդամենը (ՀՀ դրամ)	1 013 985			

7.2 Մոնիտորինգ

131. ՀՏԶՀ-ի կողմից կանոնավոր մոնիտորինգ է իրականացվելու ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով: ՀՏԶՀ-ի բնապահպանության և սոցիալական երաշխիքների մասնագետներն իրականացնելու են մոնիտորինգի դաշտային ստուգայցեր յուրաքանչյուր ենթաձրագրի կտրվածքով երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիտորինգի ստուգաթերթիկում, որի ձևաչափը ներկայացվում է Հավելված 2.:

132. ՀՏԶՀ-ն հանձնարարելու է տեխնիկական վերահսկողին իրականացնել ամենօրյա հսկողություն: Տեխնիկական վերահսկողները հսկելու են նաև բնապահպանական,

առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և ժամանակին տեղեկացնելու են ՀՏԶՀ-ին նկատված անհամապատասխանությունների մասին:

133. Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել *փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն* իրականացնել ազդակիր կողմերի համապատասխան բողոքների դեպքերում: Բողոքների գրանցամատյանի ձևաչափը բերված է *Հավելված 3*-ում:

134. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

135. 2020 թվականի հունիսի 2-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան գործող դպրոցում (ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Օհանավան 6 փողոց, 2-րդ փակողի, N4 Դպրոցական շենք) իրականացվել է դպրոցի կառուցման նախագծի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի ս.թ.-ի մայիսի 19-ի համարում: Դպրոցի կառուցման աշխատանքային նախագծի և ԲԿՊ-ի փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են ՀՏԶՀ-ի պաշտոնական կայքում (www.atdf.am)՝ գործող հանրային ծանուցման ընթացակարգին համաձայն (հանրային քննարկումը անցկացնելու օրվանից առնվազն 7 աշխատանքային օր առաջ):

136. Հանրային քննարկմանը ներկա են գտնվել բոլոր շահագրգիռ և ազդակակիր կողմերը, ներառյալ ներկայացուցիչներ կառուցվող դպրոցի նախագծային կազմակերպությունից և ՀՏԶՀ-ից: Քննարկման արձանագրությունը կներկայացվի սույն հաշվետվությանը կից, իսկ մասնակիցների ցանկը (2 էջ) ներկայացվում է *Հավելված 14-*ում:

